

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
12 - րդ դասարան

SURF-ԵՐԱԿ 1

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (17 միավոր)

1) <<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> (12 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը: (0,25 X 8 = 4 միավոր)

1. Վանի թագավորության ո՞ր արքայի օրոք հիմնադրվեց Տուշպա (Վան) մայրաքաղաքը՝

ա) Արամ (Արամու) բ) Սարգուրի I գ) Իշպուհինի դ) Մենուա

2. Ե՞րբ դաշնակիցների զորքերը գրավեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն:

ա) Ք. ա. 612 թ. բ) Ք. ա. 605 թ. գ) Ք. ա. 590 թ. դ) Ք. ա. 560 թ.

3. Ո՞ր քաղաքն էին անվանում <<Հայկական Կարթագեն>>

ա) Տիգրանակերտ բ) Արտաշատ գ) Երվանդաշատ դ) Զարիշատ

4. Մաշտոցյան գրերի գյուտից հետո ո՞րտեղ հիմնադրվեց առաջին վարդապետարանը:

ա) Արտաշատ բ) Դվին գ) Վաղարշապատ դ) Ամարաս

5. Ե՞րբ Միսր դարձավ Կիլիկիայի հայկական պետության մայրաքաղաք:

ա) 1104 թ. բ) 1151 թ. գ) 1173 թ. դ) 1198 թ.

6. Ո՞վ է Խաչատուր Աբովյանի՝ իր ծննդավայրում դրված արձանի հեղինակը:

ա) Անդրեաս Տեր-Մարության գ) Երվանդ Քոչար

բ) Հակոբ Գյուրջյան դ) Երվանդ Ոսկան

7. Ո՞վ է <<Արշակ Երկրորդ>> օպերայի հեղինակը:

ա) Արմեն Տիգրանյան գ) Քրիստափոր Կարա-Մուրզա

բ) Մակար Եկմալյան դ) Տիգրան Զուխաջյան

8. ՀՀ կառավարության կողմից ե՞րբ է հռչակվել Միացյալ և Անկախ Հայաստանը:

- ա) 1918 թ. մայիսի 28
- գ) 1919 թ. մայիսի 28
- բ) 1919 թ. փետրվարի 28
- դ) 1920 թ. մայիսի 5

բ. Լրացնել պատասխանը: (0,5 X 4 = 2 միավոր)

1. Արգիշտի I-ի արշավանքները համապատասխանեցնել տարեթվերին.

- 1. արշավանքը դեպի Ալիշտու
- 2. արշավանքը Ջագրոսյան լեռներով մինչև Պարսուա երկիր
- 3. արշավանքը դեպի Ջաբախա (Ջավախք)
- 4. արշավանքը դեպի Ուրմիո լճից հարավ-արևմուտք՝ Մեծ Ջաբի միջին հոսանքի շրջան
- 5. արշավանքը դեպի Փոքր Ասիայի տարածք

- ա. Ք. ա. 779 թ.
- բ. Ք. ա. 781 թ.
- գ. Ք. ա. 782 թ.
- դ. Ք. ա. 783 թ.
- ե. Ք. ա. 784 թ.
- զ. Ք. ա. 785 թ.

1	2	3	4	5

2. Բաբունիների անունները համապատասխանեցնել ուսումնագիտական կենտրոններին.

- 1. Սանահին և Հադլաստ
- 2. Նարեկավանք
- 3. Անիի վարդապետարան
- 4. Նոր Գետիկ
- 5. Գլաձոր
- 6. Տաթև

1	2	3	4	5	6

- ա. Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի
- բ. Ներսես Լամբրոնացի, Վահրամ Բաբունի
- գ. Մխիթար Գոշ
- դ. Վարդան Արևելցի, Հովհաննես Երզնկացի, Դավիթ Ալավկատրդի
- ե. Անանիա Նարեկացի
- զ. Ներսես Մշեցի, Եսայի Նչեցի
- է. Հովհաննես Իմաստասեր

3. Կատարել համապատասխանեցում.

Տարեթիվ

- 1) 1920 թ. հունվար
- 2) 1920 թ. ապրիլ
- 3) 1920 թ. մայիս
- 4) 1920 թ. օգոստոս
- 5) 1920 թ. սեպտեմբեր
- 6) 1920 թ. հոկտեմբեր

1	2	3	4	5	6

Իրադարձություն

- ա. Այնթապի ինքնապաշտպանության սկիզբը
- բ. թուրք-հայկական պատերազմի սկիզբը
- գ. Մարաշի գրավումը թուրքերի կողմից
- դ. ՀՀ պատվիրակության գործուղումը Մոսկվա
- ե. «Հայկական լեգեոնի» լուծարումը
- զ. Արարայի ճակատամարտը
- է. Հաճնի ինքնապաշտպանության ավարտը

4. Կատարել համապատասխանեցում:

Անուն

- 1. Լ. Չափչախյան
- 2. Ս. Զաքյան
- 3. Ն. Ստեփանյան
- 4. Գ. Վարդանյան
- 5. Ն. Սաֆարյան
- 6. Կ. Սիմոնյան

1	2	3	4	5	6

Փաստ

- ա. հայկական 89–րդ դիվիզիայի հրամանատարը 1943 թ. փետրվարից
- բ) ԽՍՀՄ կրկնակի հերոս
- գ) Առաջին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատարը
- դ) հայկական 390–րդ դիվիզիայի հրամանատարը
- ե) Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ ԽՍՀՄ հերոսը
- զ) ԽՍՀՄ հերոս, լեգենդար հետախույզ
- է) Երկրորդ աշխարհամարտում առաջին հայ ԽՍՀՄ հերոսը

գ. Լրացնել պատասխանը: (4 միավոր)

1. Գտնել ճիշտ բացատրությունները: (0,5 X 2 = 1 միավոր)

- ա. Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի կառավարիչը կոչվում էր սատրապ:
- բ. Արաբական տիրապետության շրջանում Արմինիա փոխարքայության կառավարիչը կոչվում էր ոստիկանապետ կամ փոխարքա:

գ. Արաբական տիրապետության շրջանում Արմինիա փոխարքայության կառավարիչը կոչվում էր ամիրա:

դ. Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր ստրատեգոս:

ե. Արաբական տիրապետության շրջանում Արմինիա փոխարքայության կառավարիչը կոչվում էր ոստիկան:

զ. Սասանյան տիրապետության օրոք Հայաստանի կառավարիչը կոչվում էր մարզպետ:

--	--

2. Գտնել երկու ճիշտ պնդումները.

(0,5 X 2 = 1 միավոր)

Հայաստանի թուլանալը հետևանք էր Բյուզանդական կայսրության կողմից իրականացված հետևյալ միջոցառումների.

ա. Հայկական զորքերի առանձին զորամիավորների հրամանատարներ նշանակվեցին բյուզանդացիներ, իսկ այդ զորամասերը բաշխվեցին բյուզանդական բանակների կազմում և ուղարկվեցին Հյուսիսային Միջագետք:

բ. Քաղկեդոնականություն ընդունած հայ իշխաններին շնորհվեցին բարձր տիտղոսներ և կայսրության հյուսիսային շրջաններում տրվեցին ընդարձակ կալվածքներ, իսկ քաղկեդոնակություն չընդունած նախարարները զրկվեցին կալվածքներից և աքսորվեցին Կիլիկիա:

գ. Բյուզանդիային բռնակցված շրջանների հայ բնակչությունը և հայոց եկեղեցին ենթարկվեցին ծանր հարկման, իսկ հայկական զորքերի մի մասն ուղարկվեց տերության խորքերը, մյուս մասն էլ ցիրուցան եղավ:

դ. Հայ իշխաններին շնորհվեցին բարձր տիտղոսներ և կայսրության արևմտյան շրջաններում նրանց տրվեցին ընդարձակ կալվածքներ:

ե. Բյուզանդիային բռնակցված շրջանների հայ բնակչությունը և հայոց եկեղեցին ենթարկվեցին ծանր հարկման, իսկ հարկերից ազատվեցին միայն Բյուզանդական կայսրության տարածքում գտնվող հայոց եկեղեցու թեմերը:

--	--

3. Նշված պայմաններից որո՞նք են տեղ գտել հայ-արաբական դաշնագրում.

(0,5 X 2 = 1 միավոր)

ա. Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան պահանջեին հայերը:

բ. Բյուզանդիայի և Պարսկաստանի հետ Հայաստանի սահմանային բոլոր խոշոր ամրոցներում արաբները տեղակայելու էին լավ մարզված և զինված կայազորեր, որոնց մատակարարման ծախսերը հոգալու էին հայերը:

գ. Հայաստանում գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 15-հազարանոց այրուձի, որը պետք է պատրաստ լիներ գործելու նաև այլ տեղերում:

դ. Հայաստանում գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 15-հազարանոց այրուձի, որը արաբների պահանջով պետք է պատրաստ լիներ գործելու նաև այլ տեղերում՝ բացառությամբ Բյուզանդական կայսրության դեմ արաբների մղած կռիվների:

ե. Արաբական խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո վճարվող խորհրդանշական հարկի քանակը որոշելու էին արաբները:

--	--

4. Գտնել երկու սխալ պնդումները. (0,5 X 2 = 1 միավոր)

ա. Հայ իշխանները, համոզվելով, որ երկրի փրկությունը միասնության մեջ է, համախմբվեցին Աշոտ II-ի շուրջը և միացան երկրի ազատագրման նվիրական գործին:

բ. Հայաստանը պառակտելու և ռազմականապես թուլացնելու նպատակով խալիֆը Հայաստանի նոր թագավոր ճանաչեց Սմբատ I-ի հորեղբորորդուն՝ հայոց սպարապետ Աշոտին:

գ. Համոզվելով, որ զենքի ուժով դժվար է Հայաստանի դեմ պայքարում հաջողության հասնել, Սաջյան ամիրաները փոխեցին իրենց քաղաքականությունը և որդեգրեցին հայ իշխանների միջև երկպառակություններ սերմանելու քաղաքականություն:

դ. Գագիկ Արծրունու խնդրանքով Սմբատ I-ը վերանայեց իր վճիռը և Նախճավան քաղաքը վերադարձրեց նրան, ինչի հետևանքով սրվեցին արքայի և Սյունյաց իշխանների հարաբերությունները:

ե. Հայոց եկեղեցին, որը լիակատար աջակցություն էր ցուցաբերում Բագրատունիներին, մեծապես շահագրգռված էր և կողմնակից Հայաստանի պետական անկախությունը վերականգնելուն:

--	--

դ. Լրացնել պատասխանը: (0,5 X 4 = 2 միավոր)

1. Տրված պնդումներից որո՞նք են սխալ:

ա. Արյան լիճ կոչվող լեռնային բարձրադիր լճի ափին տեղի ունեցած ճակատամարտում Բուղայի 15000-անոց զորքը խայտառակ պարտություն կրեց Գուրգեն Արծրունու 900 ռազմիկներից, ապա խուճապահար փախավ Վասպուրականից:

բ. Արճեշի ճակատամարտում հայերը կարողացան առանձին-առանձին ջախջախել արաբական երկու զորաջոկատներ և թույլ չտվեցին, որ դրանք միավորվեն ու գերի վերցրեցին 4 զորահրամանատար և 1500 զինվոր:

գ. Արցախում, Վասպուրականում և այլ վայրերում խայտառակ պարտություններ կրած Բուղային խալիֆը 855 թ. հետ է կանչում Հայաստանից:

դ. Խալիֆը ստիպված էր Հովհաննիս նշանակել «Լեռանե կառավարիչ, իսկ Սասուն գավառը, որ մինչ այդ գտնվում էր Ջազիրա նահանգի կազմում, միացվում է Արմինիային՝ անցնելով հայոց իշխանի իրավասության տակ:

ե. Հայկական 2000-անոց այրուձին, որին հետապնդում էր ավելի քան 5-հազարանոց արաբական զորքը, Ակոռիից շարունակում է ճանապարհը և բանակ դնում Արածանիի հովտում՝ Վարդանակերտ ավանի մոտ:

--	--

2. Նշված պայմաններից առանձնացնել երկուսը, որոնք տեղ չեն գտել Հեթում I-ի և Մանգու խանի միջև կնքված հայ-մոնղոլական դաշինքում:

- ա. Մոնղոլական տերությանը հարկատու լինելու պայմանով մոնղոլները համաձայնեցին պահպանելու Կիլիկիայի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
- բ. Մոնղոլական տերությունը և Կիլիկիան պարտավորվում էին միմյանց օգնել պատերազմների ժամանակ:
- գ. Մոնղոլները համաձայնեցին պահպանելու Կիլիկիայի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
- դ. Իկոնիայի սելջուկների հարձակումներից պաշտպանվելու նպատակով Կիլիկիայի սահմանամերձ բերդերում պետք է տեղակայվեին մոնղոլական կայազորեր, որոնց ծախսերը հոգալու էին հայերը:
- ե. Մոնղոլները խոստանում էին վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեդականները խլել էին Կիլիկիայից, իսկ հայոց եկեղեցիներն ու վանքերն ազատել հարկերից:

--	--

3. Թվարկվածներից որո՞նք Հայաստանի արդյունաբերական հետևանքներից չեն.

- ա. Հայաստանն աստիճանաբար ագրարային երկրից վերածվեց արդյունաբերական հանրապետության:
- բ. Կրճատվեց խորհրդահայ մտավորականության և ճարտարագիտատեխնիկական անձնակազմի քանակը:
- գ. Բանվոր դասակարգի քանակը մի քանի անգամ աճեց:
- դ. Առաջացրեց բնապահպանական խնդիրներ:
- ե. Հրազդան գետի վրա հիդրոէլեկտրակայանների կառուցումը հանգեցրեց Սևանա լճի մակարդակի իջեցմանը:
- զ. Ստեղծվեցին մի շարք կոմունաներ, արտելներ, սովխոզներ:
- է. Հայաստանում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց 30%-ով:

--	--	--

4. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա) «Երեքիե խմբակը հրատարակեց իր հոշակագիրը, որով առաջադրվում էին գրականությունը թարմացնելու, գրականության և արդիականության կապը պահելու և նախահեղափոխական գրական ժառանգությունն ամբողջությամբ պահպանելու պահանջներ:
- բ) Հայաստանում 1960–ական թթ. գիտական մտքի զարգացման հիմնական կենտրոնը Երևանի պետական համալսարանն էր, որտեղ կենտրոնացված էր հանրապետության գիտական հիմնական ներուժը:
- գ) 1950–ական թվականների կեսերից Հայաստանում մեծ զարգացում են ստացել մաթեմատիկայի գծով տարվող հետազոտական աշխատանքները, իսկ այդ ասպարեզում ձեռք բերված առաջին հաջողությունները կապված են ակադեմիկոս-

ներ Արտաշես Շահինյանի, Մկրտիչ Ջրբաշյանի և Լևոն Ռոտինյանի անունների հետ:

- դ) 1950–ական թթ. հայկական արվեստի վերելքը պայմանավորվեց նաև 1945 թ. Երևանի գեղարվեստական ինստիտուտի հիմնադրումով. ասպարեզ մտավ նոր սերունդ, որը ձգտում էր նորովի արտահայտել հասարակությանը հուզող խնդիրները:
- ե) Անկախության հռչակումից հետո ՀՀ–ում ստեղծվեցին ազատ ստեղծագործելու հնարավորություններ, բայց առկա սոցիալ–տնտեսական դժվարին իրադրությունը բացասական ազդեցություն ունեցավ հոգևոր կյանքի վրա:
- զ) 1940–1950–ական թվականներին կառուցվել են պատմության նշանավոր դեպքերն ու դեմքերը հավերժացնող հուշարձաններ, որոնցից են Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրը Ծիծեռնակաբերդում, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը, «Մայր Հայաստանե հուշարձանը Լենինականում (այժմ՝ Գյումրի) և այլն:
- է) 1950–1970–ական թթ. հայկական գեղանկարչության ամենաբնորոշ գծերն էին ավանդական ժանրերի միաձուլումը, մարդկանց և բնապատկերի համադրումը:

--	--	--

2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԷ

(5 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – ընդ առաջադրանքներ: (0,5 X 4 = 2 միավոր)

1. Ե՞րբ է ֆրանկների առաջնորդ Քլոդվիգն ընդունել քրիստոնեություն.

- 1) 486 թ.
- 2) 496 թ.
- 3) 500 թ.
- 4) 510 թ.

2. Ե՞րբ է Վուդրո Վիլսոնը վարել ԱՄՆ–ի նախագահի պաշտոնը:

- 1) 1909-1917 թթ.
- 2) 1905-1913 թթ.
- 3) 1901-1909 թթ.
- 4) 1913-1921 թթ.

3. Ո՞ր արքայի օրոք Աքքադի թագավորությունը հասավ հզորության բարձրակետին.

- 1) Սարգոնի
- 2) Համմուրապիի
- 3) Նարամսինի
- 4) Ուտուխեգալի

4. Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին որքա՞ն մարդկային կորուստներ ունեցավ ԽՍՀՄ-ը:

- 1) 25 միլիոն
- 2) 27 միլիոն
- 3) 20 միլիոն
- 4) 30 միլիոն

բ. Լրացնել պատասխանը (1 X 2 = 2 միավոր)

1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ. (1 միավոր)

- ա) Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը
- բ) Աֆրիկյան 17 երկրների անկախացումը
- գ) Հայրենական մեծ պատերազմի ավարտը
- դ) Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումը
- ե) Գերմանիայի դուրս գալը Ազգերի լիգայից
- զ) Ֆ. Ռուզվելտի ընտրվելը ԱՄՆ-ի նախագահ

1	2	3	4	5	6

2. Կատարել համապատասխանեցում.

(1 միավոր)

- 1. Պտղոմեոս
- 2. Թալես Միլեթցի
- 3. Հերոդոտոս
- 4. Վերգիլիոս
- 5. Պյութագորաս

- ա. մաթեմատիկա
- բ. գրականություն
- գ. աստղագիտություն
- դ. փիլիսոփայություն
- ե. պատմագրություն
- զ. ճարտասանություն

1	2	3	4	5

գ. Լրացնել պատասխանը:

(0,5 X 2 = 1 միավոր)

1. Նշել երկու սխալ պնդումները:

Որո՞նք էին Երկրորդ համաշխարհային պատերազմի դրական հետևանքները:

- ա) Պատերազմն ապացուցեց, որ նման կարգի ռազմական բախումը սպառնալիք է մարդկության գոյությանը, նրա ստեղծած քաղաքակրթական արժեքներին:
- բ) Միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման նպատակով ստեղծվեց նոր համաշխարհային կառույց՝ Միավորված ազգերի կազմակերպություն:
- գ) Միլիոնավոր մարդիկ կորցրեցին հավատը քաղաքակրթության առաջադիմական ապագայի հանդեպ:
- դ) Փլուզվեց համաշխարհային գաղութային համակարգը:
- ե) Կապիտալիստական աշխարհի ժողովրդավարական ուժերը և ԽՍՀՄ-ը կարողացան կամք դրսևորել ու, համագործակցության լավագույն օրինակ ցուցադրելով, մեծագույն աղետից փրկել աշխարհի ժողովուրդներին:
- զ) Պատերազմից հետո մի շարք երկրներ տիրացան ատոմային ռումբին:

--	--

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐՄԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (3 միավոր)

1. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

- ա. Պատերազմի սկիզբը, հայերի մասնակցությունը պատերազմին
- բ. Հայկական ազգային դիվիզիաների կազմակերպումը և նրանց մարտական ուղին
- գ. Խորհրդային Միության հայ հերոսներ և զորահրամանատարներ: Պատերազմի ավարտը: